

ԿԵՆՌԱՆԻՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ

ՍԱՄՈՒԷԼ ԲԱԼԱԳԵԱՆԻ

IV

ՄՐՋԻԻՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

Մեղուներից անցնենք մրջիլուններին: Այդ հետաքրքրական կենդանիների մասին անցքան գրած է, նրանց կեանքը անչպէս ուսումնասիրւած է, որ շատ քիչ կենդանիներ կարող են համեմատուել այդ բանում մրջիլունների հետ:

Մեր նպատակներից դուրս է առաջ բերել մրջիլուններին վերաբերեալ բոլոր ֆակտերը, մանաւանդ որ դոքա հատորներ կարող են կազմել, անցքան բազմաթիւ են: Այստեղ ես մատնացոյց կանեմ միայն այն ֆակտերի վերայ, որոնք վերաբերում են մրջիլունների հասարակական կազմակերպութեանը, այն էլ շատ համառօտ կերպով:

Մինչդեռ մեղուների համայնքը կառավարւում է միայն մի թագուհով, մի բեղմնաւոր էգով, մրջնանոցում դրա հակառակ շատ էգեր են լինում զբաղւած ձուեր արտադրելով, այդ պատճառով մրջնանոցը շունի այն միապետական գոյնը, որը աչքի է ընկնում մեղուների համայնքներում:

Մեղւանոցում, ինչպէս և մեղուների համայնքում, բնակիչների մեծամասնութիւնը կազմում են բանւորները, որոնք, թէև էգեր են, բայց անկարող են ձուեր արտադրել: Բոլոր բանւորները միևնոյն աշխատանքով չեն լինում զբաղւած այլ զանազան: Վինչդեռ՝

ասում է էսպինասը՝ պիծակները և զանազան տեսակ մեղուներ կատարում են փոքրիկ թւով աշխատանքներ, որոնք համարեա միշտ լինում են միակերպ, մրջիւնները վերին աստիճանի բազմակողմանի կերպով են արտայայտում իրանց գործունէութիւնը. նրանց մէջ դուք չէք գտնէք ինչ որ կամենաք—ե՛րեկրագործներ, և՛ քանդակագործներ, և՛ ճարտարապետներ, և՛ որսկաններ և նոյն իսկ զիւղատեսներ... 1)

Հասարակական աշխատանքները:

Բանւորների ամենազլխաւոր գործերից մէկը կազմում է ձագուկների խնամելը: Դեռ այդ վերջիները ծնւած չեն լինում, երբ արդէն սկսում են բանւորների հոգսերը: Նրանք լիզում են մըրջիւնների արտադրած ձուաները՝ նրանց զարգացումը արագացնելու համար, կամ անդադար քաշ են տալիս ձուաները մըջնանոցի միջարկից միւսը, նայած թէ որտեղ է աւելի տաք: Վերջապէս մի քանի օրից չետոյ ձագուկները ծնւում են, սակայն նրանք շատ քիչ նմանութիւն են ունենում մըջիւնների հետ: Այդ ձագուկները որդների են նման քան թէ մըջիւնների: Բանւորները անդադար պիտուում են նրանց շուրջը, կերակրում են կամ մաքրում նրանց: Կերակրելը հետեւալ կերպ է կատարում. բանւորները պահելով իրանց բերանում սնունդը՝ մօտենում են ձագուկներին, կայցնում են իրանց դունչը նրանց դունչին ու գցում սնունդը նրանց բերանի մէջ:

Բացի դրանից բանւորները մեծ ուշադրութիւն են դարձնում բնակարանի ջերմութեան վերայ. երբ ձագուկների շուրջը սկսում է ցրտել, բանւորները իսկոյն վերցնում են նրանց և տանում մեղնանոցի այն կողմը ուր ջերմութիւնը աւելի բարձր է: Այդ հոգսերը շարունակւում են նաև այն ժամանակ, երբ ձագուկները բոժոժ, շինելով թաղնւում են նրա մէջ: Իսկ երբ հասնում է այն ժամանակը, երբ բոժոժից պէտք է դուրս գալ բոլորովին զարգացած մըջիւնը, այդ բոլորներում էլ բանը առանց բանւորների չի անցնում. այդ վերջիները մօտենում են բոժոժներին և, ծակելով դրանց, ազատում են նրանց մէջ գտնուող մըջիւններին:

1) Эспинась Соціальная жизнь животных էջ 316.

Բոժոժներինց ազատուած մրջիւններին բանւորները լւանում են, մաքրում ու յետոյ կերակրում, իսկ դատարկ բոժոժները հանելով մրջնանոցից՝ դուրս են շարտուած: Ինչպէս յայտնի է ընթերցողին, մրջիւնները սովորութիւն ունին ամառ ժամանակը աննդական նիւթեր ժողովել իրանց ամբարներում ձմեռուայ համար: Անկասկած ամենքը նկատած կը լինին, թէ ինչպէս մրջիւնները կարգով և մեծ քանակութեամբ դուրս են գնում մրջնանոցից, իսկ մի քանի ժամանակից յետոյ վերագառնում են քաշ տալով իրանց հետ քանազան տեսակ սերմեր:

Պատահում է, որ մրջիւնները սրամիտ միջոցներ են դորձ գնում այս աշխատանքը կատարելիս: Ահա 1, եսպէսի խօսքերը վերաբերեալ այս հարցին:

Եթէ՛ սկսած այն տեղից, ուր մրջիւնները ժողովում են իրանց հունձը մինչև բռնը՝ ճանապարհը շատ երկար է, դրանք իրանց նիւթերի համար շինում են կանոնաւոր պահեստներ մեծ տերևների, քարերի տակ կամ ուրիշ յարմար տեղերում և մի քանի բանւորներին յանձնարարում են տեղափոխել այդ նիւթերը մի պահեստից միւսը՝¹⁾:

Մի քանի նատուրալիստների ասելով՝ մեղուները՝ աննդական նիւթեր ժողովելու ժամանակ երբ ճանապարհին հանդիպում են գետի, առաջ այդ վերջինի տակով անցք են շինում ու յետոյ ազատ կերպով անց են կացնում ժողոված նիւթերը գետի մի ափից միւսը:

Սակաւ չի պատահում նաև հետեւեալ հետաքրքրական դէպքը: Երբ ճանապարհը հարթ չէ և անցնում է բլուրների վերայով, մրջիւնները՝ հասնելով այդ բլուրների գագաթին՝ չեն ցածրանում բլուրից իրենց հետ բերած բեռով, այլ դիմում են մի սրամիտ միջոցի. նրանք բլուրի գագաթից իրանց բեռը գցում են ներքև ուր կանգնած են լինում նրանց ընկերները, որոնք վերցնում են բեռը ու տանում մրջնանոց: Այդպիսով բանւորները բաժանում են երկու խմբի. մէկ խումբը կանգնած բլուրի վերայ ներքև է գցում ժողոված սերմերը, միւս խումբը կանգնած բլուրի տակ հուլաքում է բլուրից դցած նիւթերը մրջնանոց:

¹⁾ Ромерсъ—Умъ животныхъ, էջ 102.

Վերև՝ էսպինասի խօսքերից մենք տեղեկացանք, որ մրջիւնների մէջ իննում են նոյն իսկ երկրագործներ: Այդ կարծիքին ետնդուն պաշապան է հանդիսանում գոկտոր Լինսկուժը: Ըստ այդ գիտնականի, չաճախ մրջիւնները հարթում են մրջնանոցի շուրջը բաւական մեծ տարածութիւն և այդ տեղ սերմում են մի տեսակ բոյս, որի սերմերը նրանք սատտիկ սիրում են: Ահա Լենսկուժի խօսքերը.

«Կասկած չըկայ՝ որ վերոյիշեալ բոյսի մի տեսակը սերմում է գիտմամբ: Մինչև որ բուսնում է այդ բոյսը, նրա տակի հողը հոգատարութեամբ մաքրում է միւս խոտերից՝ ինչպէս անում են ֆերմէրները: Իսկ երբ նա հասունանում է, սերմերը ժողովում են, ինչ որ վերաբերում է խողանին ¹⁾, դրան էլ պուկ են տալիս ու հեռացնում: Յատկացրած հողը մնում է ազատ մինչև միւս աշունքը, երբ նոյն բոյսը նորից երևան է գալիս այն տեղում և առաջւայ պէս մշակում է և այդպէս շարունակում է, ինչպէս ես գիտեմ, ամեն տարի... ²⁾»:

Ոչ պակաս հետաքրքրական են այդ տեսակէտից նաև «տերև-կրծող» մրջիւնները (журавля «листогрызы»)։ Նատուրալիստ Բէտտի, Բէլտի և Միւլլէրի գիտողութիւններից երևում է, որ այդ մրջիւնները սովորութիւն ունին ժողովել մրջնանոցի մէջ մեծ քանակութեամբ տերևներ, որոնք չեն ծառայում իբրև սնունդ: Ապա ինչո՞ւ համար են ժողովում այդ տերևները: Այդ մասին գիտնականները հետեւեալն են պատմում: Հաւաքելով մրջնանոցի մօտ բաւական շատ տերևներ՝ մրջիւնները սկսում են մանրացնել նրանց ու յետոյ քաշ տալով ներս են մտցնում նրանց ու դարսում մրջնանոցի մի անկիւնում: Շատ ժամանակ չէ անցնում և այդ տերևների վերայ առաջանում են մի տեսակ սունկեր, որոնք աճելով ու զարգանալով ծածկում են տերևների կոյտը:

Ահա այդ սունկերն են մրջիւնների ցանկացած բանը, որոնց համար այդքան աշխատում են նրանք՝ հեռու տեղերից տերևներ բերելով: Այս է պատճառը, որ «տերև կրծող» մրջիւններին գիտնականները տւել են այդ ե պան մականունը:

¹⁾ Խողան— жиптво, անւանում են հունձից լետու մնացած չոր բոյսերը:

²⁾ Дж. Роменсъ—Умъ жпвотныхъ, էջ 110.

ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԾԸ:

Պէտք այստեղ նկատենք որ բացի վերև թւած դասակարգերից, մրջիւնների հասարկութեան մէջ լինում են մի տեսակ տարօրինակ անհատներ ահագին գլուխներով ու ծնօտներով: Դոքա են մրջնանոցի զինւորները, որոնց յանձնւած է հասարակական պաշտպանութիւնը: Զինւորները ըստ մեծի մասին չեն մասնակցում միւս հասարակական աշխատանքներին, այլ կանգնած մրջնանոցի մուտքերի մօտ՝ հսկում են ու տիրում, որպէս զի իսկոյն նկատեն մօտեցող թշնամիներին:

Երբ այդ վերջիները թափւում են մրջնանոցի վերայ, նրանց աշխատում են դիմադրել նախ զինւորները, որոնց հետ միանում են յետոյ հասարակութեան բոլոր անդամները: Մրջնանոցի վերայ յարձակողներն ըստ մեծի մասին լինում են մի ուրիշ բունի մրջիւնները, իսկ յարձակելու նպատակը կողոպուտն է՝ ինչպէս և մեղունների շրջանում:

Մի համայնքի յարձակելը միւսի վերայ մրջիւնների մէջ աւելի ևս տարածւած է քան թէ մեղունների հասարակութեանց մէջ:

Կան մրջիւնների այնպիսի տեսակներ, որոնց սիրած գործը հէնց այդ կռիւներն են: Սրանից յետոյ հասկանալի է թէ ինչու այնպէս թշնամաբար են վերաբերում տարբեր համայնքների անհատները: Երբ պատահմամբ մի որ և է մրջնանոցի մօտերքում մրջիւնները նկատում են մի ուրիշ հասարակութեան պատկանող անհատներին, դրանց կամ իսկոյն սպանում են, կամ թէ քաշ են տալիս նրանց ու բաւական հեռացնելով իրանց մրջնանոցից շարտում են դէն դցում:

Այդպիսով աւազակային ձգտումները սաստիկ զարգացած են մրջիւնների շրջանում, որոնց շնորհիւ միշտ անպակաս են լինում նրանց մէջ կռիւները: Վերին աստիճան կանոնաւոր կերպով են կատարւում այդ կռիւները, որոնց պատմութիւնը կարգալիս մարդակամայ չիշում է մարդկային հասարակութիւնների կռիւները, այնքան նման են նրանք:

Մի որ և է համայնք՝ մտադրելով յարձակում գործել թշնամիների վերայ՝ ուղարկում է մի փոքրիկ խմբակ ուսումնասիրելու թէ ճանապարհը և թէ թշնամիների բունի տեղը: Այդ յանձ-

նարարութիւնը կատարելուց յետոյ խմբակը վերադառնում է տուն, և երբ բոլոր մրջիւնները դուրս են գալիս բնից ու ճանապարհ ընկնում, խմբակը գնալով ամբողջ զօրքի առաջ ցոյց է տալիս նրան ճանապարհը:

Լեւոնը հետեւեալ կերպ է նկարագրում մրջիւնների արշաւանքը:

«Պարզ օրերում, ժամի երեքին կամ չորսին ճաշից յետոյ՝ դուրս են գալիս իրանց բունից աւազակ մրջիւնները: Սկզբում նրանց շարժածքներում ոչինչ կարգ չի լինում, բայց երբ ամենքը հաւաքւած են լինում, նրանցից կազմւում է մի կանոնաւոր զօրք, որը սկսում է արագ կերպով գնալ առաջ... Իմ տեսած զօրքերից ամենափոքրիկները բազկացած էին մի քանի հարիւր անհատներից, բայց ես տեսել եմ նաև շարս անգամ աւելի մեծ զօրքեր...»: Երբ զօրքը հասնում է թշնամիների մրջնանոցին, իսկոյն յարձակողները թափւում են այդ վերջինի վերայ: Յարձակողները ամենից առաջ աշխատում են իրանց ձեռքը գցել թշնամու բունի մուտքերը, որպէս զի հնարաւոր լինի ներս մտնել: Որովհետև պաշարւածները սաստիկ դիմադրութիւն են անում, ուստի սկսւում է մի սարսափելի կռիւ, որը այստեղ կատարւում է նոյնքան անդթաբար, ինչպէս և մարդկանց շրջանում:

Վերջապէս յարձակողներին յաջողւում է ներս մտնել թշնամիների բնակարանը, ուր նրանք խլում են թշնամիների ձագուկներին ու դրանց հետ միասին դուրս են փախչում: Նրանց ետևից վազում են պաշարւածները և ճգնում են յետ խլել իրանց ձագուկներին: Այնպէս որ կռիւը շարունակւում է նաև մրջնանոցից դուրս աւազակները վազում են տանելով իրանց հետ թշնամիների ձագուկներին, իսկ նրանց հալածում են պաշարւածները, աշխատելով փրկել իրանց ձագերին:

Այստեղ ինչպէս և մարդկանց կռիւներում՝ պատերազմը միևնոյն կերպ չէ վերջանում ամեն անգամ. մի որ և է արտաքին անսպասելի հանգամանք կարող է մեծ ազդեցութիւն ունենալ կռուողների վիճակի վերայ:

Յաճախ պատահւում է, որ մի որ և է մրջնանոցի համայնք չի բաւականանում մի արշաւանքով. ընտրելով թշնամիների մի բուն,

նա ժամանակ առ ժամանակ յարձակումներ է անում այդ բունի վերայ:

Խօսելով ամազոնկա անանուած մրջիւնների մի արշաւանքի մասին՝ Բոմէնը շարունակում է. «աւազակները ուղևորեցին դէպի մօտակայ բունը, որը պատկանում էր մրջիւնների rufilarbis տեսակին, կողոպտեցին այդ բունը և կոտորեցին բնակիչների կէսը: Կենդանի մնացած rufibarbis մրջիւնները վերադարձան տուն ւաւերումից յետոյ և արտադրեցին նոր սերունդներ. բայց 13 օրից յետոյ ամազոնկա մրջիւնները նորից յարձակեցին և հարուստ հունձ հաւաքեցին այդ բունից: Ամազոնկա մրջիւնների զօրքը յաճախ բաժանւում է երկու խմբի. երբ երկուսի համար քիչ գործ է լինում մի տեղում... Ֆօրէլը փորձեց որոշել այդպիսի արշաւանքների թիւը որոշ ժամանակամիջոցում: Նա իմացաւ, որ իրա դիտած համայնքը մի ամուսյ ընթացքում զանազան կողմեր ուղարկեց ոչ պակաս քան 44 աւազակային արշաւանքներ: Այդ թւից մօտաւորապէս 28 արշաւանքները յաջողեցան, 9 յաջողեցան մասամբ, իսկ մնացածները անյաջող էին... Երբեմն ամազոնկա մրջիւնների մէջ պատահում են ներքին պատերազմներ և այդ տեսակ պատերազմները ամենաարիւնահեղն են լինում: Այդ դէպքում աներևակայելի կատաղութեամբ կոտորում են իրար ամազոնկա մրջիւնները և դուք տեսնում էք թէ ինչպէս կազմւում են 5—6 անհատներից բաղկացած կծիկներ իրար կպչելով և իրար կծոտելով: Այդ կծիկները թաւալւում են դետնի վրայ այնպէս, որ անհնարին է լինում իմանալ թէ որոնք են բարեկամները և որոնք թշնամիները: Յայտնի է, որ մարդկանց շրջանում էլ ներքին պատերազմները լինում են ամենակատաղին և ամենաարիւնահեղը ¹⁾»:

Մրջիւնների տեսակներ շատ կան և կարելի է ստել, որ ամեն մի տեսակը ունի իր առանձին կանոնները կուելու ժամանակ: Օրինակ մի տեսակի համայնքը ձեռնարկում է աւազակային արշաւանքներ՝ հազարաւոր զինւորներից բաղկացած՝ ահագին զօրքերով: Միւս տեսակի հասարակութիւնը ընդհակառակը սիրում է կողոպուտի գնալ փոքրիկ գունդերով: Մի տեսակի մրջիւնները՝ հասնելով թըշ-

¹⁾ Д. П. РОВЕНСЪ —նոյն տեղը էջ 75:

Նամինների բունին՝ իսկոյն չեն յարձակուում, այլ սպասում են մինչև որ զօրքի ետևի գունդերն էլ հասնում են ու յետոյ պաշարում են թշնամիներին դանդաղ կերպով ամեն մի քայլը խորհելով:

Միւս կողմից կան և այնպիսի տեսակներ, որոնց զօրքը՝ հասնելով թշնամիների մրջնանոցին՝ այն աստիճան կատաղում է, որ ամեն զգուշութիւն մոռանալով՝ իսկոյն և եթ վրայ է թափւում թշնամիների վրայ: Այս դէպքում յարձակողները շատ անգամ այնպիսի բաներ են անում, որից պարզ երևում է, որ նրանք կատաղութիւնից կորցրել են իրանց խելքը:

Ի՞նչ ասել կուզէ, որ յարձակողների համար գործը միշտ չէ յաջող անցնում. պատահում է, որ պաշարւածների ընդդիմադրութիւնը այնքան ուժեղ է լինում, որ յարձակողները ոչինչ չեն կարողանում անել և ստիպւած են լինում հեռանալ: Հէնց այդ բանին են սպասում պաշարւածները, որպէս զի իսկոյն դուրս թափւեն բունից և սկսեն կատաղաբար հալածել փախչողներին անխնայաբար կոտորելով նրանց:

Նատուրալիստ Հուբերը հետեւեալն է պատմում արիւնագոյն և սև մրջիւնների մէջ պատահած մի կռիւ մասին:

«Յուլիս ամսում առաւօտեան ժամը 10-ին ես նկատեցի, որ արիւնագոյն մրջիւնների մի փոքրիկ հրոսակ դուրս եկաւ իր բունից և շուտափոյթ ուղևորեց դէպի սև մրջիւնների բունը, որի վերայ և թափւեց: Բունից դուրս վազեցան մեծ քանակութեամբ սև մրջիւններ, նրանք պատերազմ արեցին, յաղթեցին յարձակողներին և շատերին գերի վերցրին: Այդ ժամանակ յարձակողների մնացորդը սկսեց օդնութեան սպասել (իրանց մրջնանոցից): Սակայն այդ օգնութիւնը դալուց յետոյ էլ յարձակողները չէին համարձակւում սկսել գործը, նրանք էլի մի քանի ափիտանտներ ուղարկեցին իրանց բունը: Դոցա ուղարկելու հետեանքը այն եզաւ, որ օգնութեան եկաւ մի աւելի մեծ գունդ...»:

Լինում են դէպքեր, երբ՝ երկար ժամանակ կուեկուց յետոյ՝ երկու կողմի զօրքերը վերջապէս հաշտուում են. նրանց մէջ կազմւում է դաշնադրութեան պէս մի բան. «փոքրիկ խելօք կնդանիները՝ ինչպէս ասում է Բոմէնսը՝ մարդկանցից անհամեմատ աւելի շուտ և աւելի լաւ են ըմբռնում, որ իրանց կռիւներով նրանք

իրար ֆնասում են, մինչդեռ միաբանութիւնը օգտաւէտ է երկու կողմի համար էլ:

Կռիւների բազմաթիւ հետեւանքներից մէկն էլ ստրկապահութեան սովորութիւնն է: Այդ երեւոյթի վերայ ամենից առաջ Հուբէրը դարձրեց գիտնականների ուշադրութիւնը՝ ցոյց տալով, որ մրջիւնների երեք տեսակները՝ այն է *Formica rufescens*, *Formica sanguina* և *Formica strongylognathus*՝ ստրուկներ են պահում իրանց մրջնանոցներով:

Յետագայ ժամանակներում Հուբէրի այդ կարծիքին միացան ևս այնպիսի մեծ գիտնականներ՝ որպիսիք են Ջոն Լեօբոկը, Ջարլզ Գարլինը և միւսները: Այդպիսով ստրկապահութեան երեւոյթների մասին մրջիւնների շրջանում այժմ կասկած չկայ ամենևին դիտութեան մէջ:

Մեզ արդէն յայտնի է, որ մի որ և է մրջիւնային համայնք՝ յարձակում գործելով թշնամու լուսնի վերայ և յաղթելով նրան, ամենից առաջ աշխատում է յափշտակել թշնամիների ձաղուկներին կամ, աւելի ճիշտ է ասել, նրանց բոժոժներին, որոնց հետ և վկառնում է իւր մրջնանոցը: Թէև պատահում է երբեմն, որ մլրջիւնները արշաւանք են սկսում միայն այն նպատակով, որ խլեն թշնամիներից դրանց ժողոված սննդական նիւթերը, բայց անհամեմատ աւելի յաճախ են ձեռնարկում արշաւանքները ոչ թէ այդ նիւթերը կողոպտելու համար, այլ թշնամիների բոժոժները գողանալու համար:

Այդպիսով յաջող արշաւանքից յետոյ աւազակ մրջիւնները բերում են իրանց մրջնանոցը ահագին քանակութեամբ թշնամիների բոժոժներից: Դոքա իսկոյն յանձնւում են մրջնանոցի բանւորներին, որոնք սկսում են հողալ նրանց մասին այնպէս, որ կարծես թէ դոքա պատկանելիս լինեն սեպհական մրջնանոցին:

Մի քանի ժամանակից յետոյ ուրիշ մրջնանոցից դողացած բոժոժներից դուրս են գալիս մրջիւնները, որոնք՝ պատկանելով մրջիւնների այլ տեսակի՝ ճիշտ ջուրում են յաղթող մրջնանոցի անհատներից: Օրինակ եթէ մենք քանդենք *Formica sanguinea* տեսակին պատ-

կանոց մրջնանոցը, մենք կը նկատենք բազմաթիւ կարմիր մրջիւններ և նոցա հետ փոքր քանակութեամբ սև անհատներ: Կարմիրները մրջնանոցի տէրն են, իսկ սևերը—նրանց գերին:

Հասարակական գործերի մի մասը յանձնուած է գերիներին: Ընթր հարանակներից (КУКОЛКА) դուրս են գալիս մրջիւններ չաղթողների բունուած, ասուած է Ռոմէսը, այդ փոքրիկ գերիները սկսուած են իրանց գործունեայ կեանքը, երևի իրանց սեպհականը համարելով իրանց աղաների տունը, որովհետև նրանք երբէք փորձ չեն անուած փախչելու և պաշտպանուած են իրենց աղաների բունը նոյնպէս կատարարար ինչպէս և աղաները... ¹⁾:

Ստրկապահութեան երեւոյթները միակերպ չեն զանազան տեսակների պատկանող հասարակութիւնների մէջ: Մրջիւնների մի տեսակի համայնքները բազմաթիւ ստրուկներ են պահուած, միւս տեսակի մրջնանոցներու ընդհակառակը գերիների թիւը շատ փոքրիկ է:

Նոյնպէս տարբեր է ստրուկների հասարակական դիրքը զանազան տեսակների համայնքներում: Ահա մի քանի օրինակներ:

Սկսենք արիւնագոյն մրջիւններից (Formica sanguinica): Դոցա հասարակութիւնները պահուած են սակաւաթիւ ստրուկներ, որոնց հետ վարուած են խիստ կերպով, թոյլ շտալով, որ նրանք դուրս գան երբ և իցէ մրջնանոցից: Ստրուկները՝ փակաճ լինելով բունի մէջ՝ պարապաճ են լինում ներքին տնային գործերով: Իսկ ինչ վերաբերում է արտաքին հասարակական գործերին, դրանք կատարուած են ոչ թէ ստրուկների այլ աղաների՝ այսինքն արինագոյն մրջիւնների՝ ձեռքով:

Որ արիւնագոյն մրջիւնները այնքան էլ հաւատ չեն ընծայում իրանց ստրուկներին՝ այդ պարզ երևում է նրանից, որ՝ երբ համայնքը որոշում է հին բունը թողնել և նոր տեղ ընտրել նոր մրջնանոց շինելու համար՝ այդ ճանապարհորդութիւնը կատարելու ժամանակ աղաները տանում են ստրուկներին, բունձ ունենալով վերջիններին իրանց ծնոսներում: Ուրիշ խօսքերով՝ արիւնագոյն մրջիւնների ստրուկները ամեն մի քայլափոխում զգում են իրանց ազատութիւնից զրկաճ, կաշկանդաճ:

¹⁾ Дж Роменсъ—նոյն տեղը, էջ 64:

Այլ է ստրուկների դրուժիւնը *Formica rufescens* տեսակի համայնքներում: Սոքա պահում են միշտ անհամեմատ աւելի շատ ստրուկներ՝ քան արիւնագոյնների համայնքները: Բացի դրանից *Formica rufescens* տեսակը սովորութիւն ունի յանձնել ստրուկներին ոչ միայն տնային աշխատանքները, այլ և համարեա բոլոր մնացած հասարակական գործերը: Ստրուկները կառուցանում են բնակարան հասարակութեան համար: Ժողովում են մրջնանոցը սննդական նիւթեր ձմեռայ համար, կերակրում ու մաքրում են մրջնանոցի ձագուկներին... Իսկ նրանց աղաները ոչնչից ոչինչ չեն անում, բացի ուտելուց, հանգստանալուց և կռիւներ անելուց:

Երբ *Formica rufescens* տեսակի մրջիւնների համայնքը ուղում է մրջնանոցի տեղը փոխել, այդ ժամանակ ոչ թէ աղաներն են տանում իրանց վերայ ստրուկներին (ինչպէս սովորութիւն ունեն անել արիւնագոյնները), այլ ընդհակառակը ստրուկներն են տանում իրանց վերայ աղաներին: Ենորհիւ այդպիսի ձրիակերութեան՝ *Formica rufescens* տեսակի մրջիւնները այնքան քնքշացել են, որ այլ ևս ոչ մի աշխատանքի ընդունակ չեն: Նրանք օրինակ չեն կարողանում հոգալ իրանց ձագուկների մասին, այնպէս, որ եթէ ստրուկները չլինէին, այդ ձագուկները կը կոտորէին: Սակայն պէտք է աւելացնեմ, որ *Formica rufescens* տեսակի անընդունակութիւնը աւելի ևս հեռու է գնում: Պոքա ոչ միայն իրանց ձագուկներին չեն կարողանում կերակրել, այլ և միանգամայն անընդունակ են դառնել իրանք իրանց կերակրել, այնպէս որ այդ գործն էլ կատարում են ստրուկները: Իրան, գիտնականները փորձերով ապացուցեցին, որ *Formica rufescens* մրջիւնները սովածութիւնից կոտորւում են, երբ նրանցից հեռացնում ենք նրանց ստրուկներին...

Առաջ քան վերջացնեմ խօսքս մրջիւնների համայնքների մասին՝ հարկ եմ համարում մի քանի խօսք ասել մի երևոյթին մասին ևս, որ յաճախ պատահում է մրջիւնների կեանքում: Խօսքս ընտանի կենդանիներ պահելու մասին է:

Նախ Հուբերը, ապա Դարելը և Զոն Լեոբոկը ցոյց տւին, որ մրջիւնների մի քանի տեսակները ունին իրանց համար կովեր,

որոնց պահում են մրջնանոցներում և ժամանակ առ ժամանակ կթում են:

Իբրև կով մրջիւնների համար ծառայում է մի տեսակ փոքրիկ միջատ, որը յաճախ լինում է զանազան բոյսերի տերևների վրայ և որին գիտնականները անւանում են բուսական ոջիւն:

Ըստ Հուբերի՝ մրջիւնները հաւաքում են բուսական ոջիւնների ձւաները և նրանց հետ վարում են այնպէս, ինչպէս իրանց սեպհականների հետ, այսինքն պահպանում են նրանց և հոգում վերին աստիճան խիստ կերպով: Երբ այդ ձւաներից դուրս են գալիս փոքրիկ ոջիւններ՝ մրջիւնները դրանց պահպանում ու կերակրում են, իսկ նրանք տալիս են մրջիւններին մեղրի նման համեղ հեղուկ, որը դուրս է հոսում նրանց փորից:

Այդ ամեղրը հոսում է ոչ թէ ինքն իրան, այլ մրջիւնների օգնութեամբ. երբ կթելու ժամանակը գալիս է՝ մրջիւնները սկսում են շոյել իրանց պէխերով ոջիւնների փորը, որից իսկոյն սկսում է հոսալ քաղցր նիւթը: Այդ ժամանակ մրջիւնները լիզում են դուրս եկած մեղրը:

Մրջիւնները պահում են իրանց կովերին կամ իրանց բուններում կամ թէ բուններից դուրս բոյսերի տերևների վրայ: Երկրորդ գէպքում մրջիւնները յաճախ պատեր են շինում իրանց կովերին պաշտպանելու համար: Մի քանի գիտնականների ասելով, բացի բուսական ոջիւններից՝ մի քանի ուրիշ միջատներ էլ են ծառայում իբրև կովեր մրջիւնների համար:

(Կը շարունակւի)